Հաշվետվություն

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Արա Նազարյանի՝ Ինդոնեզիայի Հանրապետություն կատարած գործուղման վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

   Արա Սուրենի Նազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Աղետների ռիսկի նվազեցման 7-րդ գլոբալ պլատֆորմ, Բալի, Ինդոնեզիա, 2022 թ. մայիսի 23 – 28

4. **Հրավիրող կողմը.**

   Ինդոնեզիայի կառավարության Աղետների ռիսկի նվազեցման 7-րդ գլոբալ պլատֆորմի ազգային հանձնաժողովի քարտուղարություն, ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակ

5. **Գործուղման նպատակը.**

   Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) համաշխարհային գործողությունների ամփոփումը, ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի միջնաժամկետ ամփոփման իրականացումը անդամ պետությունների կողմից, համայնքային մակարդակում դիմակայունության զարգացման խթանումը «Դարձնենք քաղաքները դիմակայուն» ծրագրի շրջանակներում և անդամ պետությունների կողմից հաշվետվողականության իրականացումը

6. **Քննարկված թեմաները.**

   1. Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ուղղությամբ ազգային ռազմավարությունների ընդունման ընթացքը և առկա խնդիրները.

   - ԱՌՆ հաշվետվողականությունը՝ փաստահեն որոշումների կայացման համար,

- ԱՌՆ ֆինանսավորման եղանակները, մոտեցումները, հաջողված մեխանիզմները,
- Կլիմայի հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման օրակարգերի փոխկապակցվածության և փոխլրացնող ծրագրերի համադրումը առավել շոշափելի արդյունքների հասնելու համար,
- Հանրության լիակատար ներգրավման ուղղությամբ հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի խմբերի ակտիվ ներառումը ԱՌՆ գործընթացներում,
- Անդրսահմանային աղետների դիմակայունության բարձրացումը տարածաշրջանային համագործակցության ընդլայնման եղանակով:

2. Առաջիկա հնգամյակում վաղ ազդարարման համակարգերի զարգացումը անդամ պետություններում՝ իբրև Սենդայի ԱՌՆ գործողությունների ծրագրի թիրախային առաջնահերթություն (ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարի ուղերձը):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ա. Տեղի է ունեցել Հայաստանի պատվիրակության պաշտոնական հանդիպումը ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի ղեկավար Ռիկարդո Մենայի հետ, որի ժամանակ պ-ն Մենայի կողմից բարձր է գնահատվել Հայաստանի մասնակցությունը ԱՌՆ տարաշրջանային և համաշխարհային գործընթացներին:

1. Քննարկվել է առաջիկա հոկտեմբերի 13-ին՝ ԱՌՆ միջազգային օրվան ընդառաջ, իրազեկման միջոցառումների, աշխատաժողովի անցկացման հնարավորությունը, ուղղված վաղ ազդարարման համակարգերի զարգացման խնդիրներին՝ ներգրավելով գիտական հասարակության, համապատասխան ծառայությունների և գերատեսչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:
2. Քննարկվել են վաղ ազդարարման բազմա-աղետային համակարգերի զարգացման, տեխնիկական կարողությունների բարելավման խնդիրները և հնարավորությունները՝ ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի և աջակից դոնոր կազմակերպությունների միջոցով:

Բ. Բարձր մակարդակի հանդիպումների շրջանակներում իմ կողմից իրականացվել է զեկույց "Դիմակայունության մտորումներ. Փոխելով մոտեցումները ԱՌՆ ֆինանսավորման շուրջ" խորագրով նախարարական կլոր

սեղանի ընթացքում, ներկայացվել են Հայաստանի փորձը, մարտահրավերներն ու ձեռքբերումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Առաջարկվել է քննարկված խնդիրների և գործողությունների շրջանակներում շարունակել ակտիվ համագործակցությունը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի հետ՝ համապատասխան փորձագետների ներգրավմամբ հետևյալ ծրագրերի շրջանակներում.

1. «Դարձնենք քաղաքները դիմակայուն» (MCR2030) ծրագրի շրջանակներում աջակցել Հայաստանի համայնքների ներառման գործընթացին, ցուցաբերել խորհրդատվական աջակցություն քաղաքների դիմակայունության գնահատման իրականացման և ԱՌՆ գործառույթների ներգրավման ուղղությամբ:
2. Սենդայի ԱՌՆ Միջնաժամկետ գնահատման և հաշվետվության նախապատրաստման ուղղությամբ անցկացնել անհարժեշտ հանդիպում-քննարկումներ և աշխատաժողովներ՝ ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակի կողմից ներկայացված ուղեցույցի շրջանակներում հաշվետվության պատրաստման ուղղությամբ, համագործակցելով ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի, ԱՌՆԱՊ հիմնադրամի և ՄԱԿ-ի ԱՌՆ փորձագետների հետ՝ կազմակերպչական և մեթոդական առումներով: Արդյունքները, մասնակից պետությունների տվյալների հետ համատեղ, ներառվելու են Նյու-Յորքում 2023 ամենաբարձր ներկայացուցչական մակարդակով կայանալիք Գլխավոր Ասամբլեայի նյութերում:
3. Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ ս/թ հոկտեմբերի 13 -ին ԱՌՆ միջազգային օրվան նվիրված հանրային իրազեկման և վաղ ազդարարման համակարգերի զարգացման աշխատաժողովի կազմակերպման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1. ԱՌՆ Սենդայի գործողությունների ծրագրի միջնաժամկետ գնահատման գործընթացի համակարգման համար առաջարկվում է ԱԻՆ համապատասխան ստորաբաժանման մասնակցությամբ իրականացնել աշխատանքային քննարկումներ շահառու կազմակերպությունների հետ :

2. «Դարձնենք քաղաքները դիմակայուն» ծրագրի խթանման ուղղությամբ առաջարկվում է իրականացնել խորհրդատվական հանդիպումներ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:
3. Աղետների ռիսկի նվազեցման միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար առաջարկվում է պատրաստել հնարավոր միջոցառումների ցանկը և պլան-ժամանակացույցը:
4. Վաղ ազդարարման համակարգերի բարելավման ուղղությամբ առաջարկվում է կազմակերպել մասնագիտական աշխատաժողով ԱԻՆ և այլ հնարավոր շահառուների համապատասխան ներկայացուցիչների հետ:

10. Գործուղվողը.

Արա Սուրենի Նազարյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

31 մայիսի, 2022թ.